Թողարկման 17-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2010

մայիս

թիվ 5 (141)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

5 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները Արարատբանկ ԲԲԸ-ին «Վիզա» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն, որոշ ՍՊԸ-ների արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև «Լոնդոն-Երևան ԿՕ» ապահովագրական ՍՊԸ-ին լուծարման նախնական համաձայնություն տալու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրելու, գրավատան կազմակերպման լիցենզիաների գործողությունը ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև մի շարք ՍՊԸ-ներ ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները մի շարք ՓԲԸ-ների ներկայացուցչությունները և մասնաճյուղերը գրանցելու, «Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի ներկայացուցչությունները գրանցումից հանելու և որպես մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև «Յունիբանկ» ՓԲԸ «Վաղարշյան» մասնաճյուղի գործունեության դադարեցումը գրանցելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Դևկո» գրավատուն ՍՊԸ-ի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, մի շարք ՍՊԸ-ների, ՓԲԸ-ների և արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 92Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 104-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Մովսես Խորենացի-1600», «Վարդգես Սուրենյանց-150», «Վահան Տերյան-125», «Լեոնիդ Ենգիբարյան-75», «Րաֆֆի-175», «Լեո-150» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 2 պաշտոնական պարզաբանումը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «զ» և «ժ» կետերի մասին

13 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***«Վիզա» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** Արարատբանկ բաց բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 91Ա):
- ***Լուծարման նախնական համաձայնություն է տրվել*** «Լոնդոն-Երևան ԿՕ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 95Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Վաղարշ և որդիներ» և «էդ-Սքայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 98Ա, 117Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Ինռիմ-Կրեդիտ» և «Կայ-Ման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 99Ա, 119Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել (դադարեցվել է)*** «Արմեն Կրտսեր» և «Մերի Վոյաժ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիայի գործողությունը (որոշումներ թիվ 101Ա, 118Ա):
- ***Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառվել են*** «Տուր Դելիս», «Վիպ Լավ Կոնստանտինք», «Սթորքս Լիմ», «Միդլմեն» և «Սիրով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (որոշումներ թիվ 1/373Ա, 1/403Ա, 1/407Ա, 1/428Ա, 1/479Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆինքա» և «Նոր հորիզոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Մասիս» ու «Արարատ» ներկայացուցչությունները, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոն» և «Ինեկոբանկ», «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների «Շենգավիթ» և «Կասկադ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/432Ա, 1/455Ա, 1/487Ա, 1/491Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության Բերդի և Ճամբարակի ներկայացուցչությունները և ***գրանցվել են*** Բերդի և Ճամբարակի մասնաճյուղերը (որոշում թիվ 1/468Ա):
- ***Գրանցվել է*** «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Վաղարշյան» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/490Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար «Դևկո» գրավատուն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման ***լիցենզիան ուժը կորցրած (գործողությունը դադարեցրած) է ճանաչվել*** (որոշում թիվ 94Ա), մի շարք գրավատների, փակ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 11270000 դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/423Ա, 1/441Ա-1/443Ա, 1/445Ա, 1/474Ա, 1/495Ա-1/497Ա) և ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/375Ա-1/377Ա, 1/387Ա, 1/390Ա-1/395Ա, 1/415Ա1/418Ա, 1/422Ա, 1/440Ա, 1/444Ա, 1/447Ա-1/449Ա, 1/452Ա, 1/471Ա, 1/472Ա, 1/475Ա, 1/489Ա, 1/493Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 92Ա որոշմամբ 2010 թ. մայիսի 12-ից ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 7.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 12.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝4.25%:***

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Մովսես Խորենացի-1600», «Վարդգես Սուրենյանց-150», «Վահան Տերյան-125», «Լեոնիդ Ենգիբարյան-75», «Րաֆֆի-175», «Լեո-150» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2010 թվականի հունիսի 17-ից շրջանառության մեջ դնել «Մովսես Խորենացի-1600», «Վարդգես Սուրենյանց-150», «Վահան Տերյան-125», «Լեոնիդ Ենգիբարյան-75», «Րաֆֆի-175», «Լեո-150» հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունը, որը հուշադրամների դիմերեսի և դարձերեսի ուրվագծերի հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մայիսի 2010 թ., N 104-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի մայիսի 11-ի թիվ 104-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Մովսես Խորենացի -1600» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված հուշադրամ:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. մայիսի 11-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.05.2010 թ. (ՀՀՊՏ N13 (365), 1.06.2010):

Հուշադրամի դիմերեսին պատկերված է միջնադարյան մանրանկարչության մոտիվներով կատարված ձեռագրերի առաջին էջ՝ խորան, որի ներքևի մասում զետեղված է Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունից դրվագ: Հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», տեղադրված է ներքևի հատվածում, իսկ ձախ կիսաշրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»: Հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2010», և ոճավորված զարդանախշը աջ հատվածում են:

Հուշադրամի դարձերեսի ձախ հատվածում պատկերված է դրվագ Սարգիս Պիծակի աշխատանքից՝ պատմագրի հավաքական կերպար, իսկ աջ հատվածում՝ խորան և Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» գործից դրվագ: Հուշադրամի ներքևում մակագրված է «1600-ամյակ», իսկ կիսաշրջագծով՝ «ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ» և «MOVSES KHORENATSI»:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը	արծաթ, 925^0
Քաշը	33.6 գ
Տրամագիծը	40.00 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

1.2. «Մովսես Խորենացի - 1600» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





2. «Վարդգես Սուրենյանց - 150» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Վարդգես Սուրենյանցի «Տիրամայրը մանկան հետ» կտավից դրվագ: Հուշադրամի անվանական արժեքը՝ «100 ԴՐԱՄ», տեղադրված է ներքևի հատվածում, իսկ ձախ մասում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2010»:

Հուշադրամի դարձերեսին Վարդգես Սուրենյանցի լուսանկարն է և ներկապնակ: «ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ», «VARDGES SURENIANTS» և «1860-1927» մակագրությունները տեղադրված են հուշադրամի աջ հատվածում:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը	արծաթ, 925^0
Քաշը	28.28 գ
Չափսերը	28.00 x 40.00 մմ
Դրամաշուրթը	հարթ
Որակը	լավացված
Չհավորումը	գունավոր ներկեր դարձերեսին
Տպաքանակը	500 հատ

2.1. «Վարդգես Սուրենյանց - 150» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





3. «Վահան Տերյան -125» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսի ներքին շրջանակում պատկերված է աշնանային տեսարան: Ներքին շրջանակի ներքևի հատվածում տեղադրված է հուշադրամի անվանական արժեքը՝ «10000 ԴՐԱՄ»: Հուշադրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսի ներքին շրջանակում Վահան Տերյանի դիմանկարն է: Հուշադրամի վերին շրջագծով «ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ» և «VAHAN TERIAN» մակագրություններն են, իսկ ներքևում տեղադրված են բանաստեղծի ծննդյան և մահվան տարեթվերը՝ «1885-1920»:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակներն են Էդուարդ Կուրղինյանը (դիմերես) և Հարություն Սամուելյանը (դարձերես):

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը	ոսկի, 900^0
Քաշը	8.6 գ
Տրամագիծը	22.00 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	1000 հատ

3.1. «Վահան Տերյան - 125» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





4. «Լեոնիդ Ենգիբարյան -75» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Լեոնիդ Ենգիբարյանի ծննդյան 75-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսի ներքին շրջանակում պատկերված են Ենգիբարյանի ամենահայտնի ծիծաղաշարժ համարի գործողության փուլերը: Աջ հատվածում տեղադրված է հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2010»: Հուշադրամի եզրագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է և հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին Ենգիբարյանի դիմանկարն է՝ ծակոտված հովանոցի ֆոնի վրա: Դիմանկարի ձախ մասում տեղադրված են «ԼԵՈՆԻԴ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ» և «LEONID YENGIBAROV» մակագրությունները, իսկ աջ մասում՝ «75-ամյակ»:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Վարդան Վարդանյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը	արծաթ, 925^0
Քաշը	33.6 գ
Տրամագիծը	40.00 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

4.1. «Լեոնիդ Ենգիբարյան -75» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





5. «Րաֆֆի -175» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Րաֆֆու ծննդյան 175-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են փետուրե գրիչ և Րաֆֆու ստորագրությունը՝ «Ձայն տուր, ո՛վ ծովակ» բանաստեղծության ձեռագրի ֆոնի վրա: Ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», իսկ ձախ մասում՝ թողարկման տարեթիվը՝ «2010»: Հուշադրամի աջ կիսաշրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Րաֆֆու կիսանդրին: Հուշադրամի շրջագծով «1835 ՐԱՖՖԻ 1888» մակագրությունն է:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը	ոսկի, 900^0
Քաշը	8.6 գ
Տրամագիծը	22.00 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	1000 հատ

5.1. «Րաֆֆի - 175» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





6. «Լեո -150» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Լեոյի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Արարատ լեռը և գիրք, որոնցից վերև տեղադրված է Լեոյի ստեղծագործությունից ձեռագիր հատված: Մեջտեղում «Հայ ժողովրդի պատմություն» մակագրությունն է, որից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ»: Հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2010», տեղադրված է ձախ հատվածում: Հուշադրամի աջ կիսաշրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսի ներքին շրջանակում Լեոյի դիմանկարն է, իսկ եզրագծով՝ «ԼԵՈ», «LEO» և «1860-1932» մակագրությունները:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը	արծաթ, 925^0
Քաշը	33.6 գ
Տրամագիծը	40.00 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

6.1. «Լեո - 150» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «զ» և «ժ» կետերի մասին[*]

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը և հաշվի առնելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի «զ» և «ժ» կետերի պարզաբանման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պ ա ր զ ա բ ա ն ու մ է.

Օրենքի 3-րդ հոդվածի «զ» և «ժ» կետերով նախատեսված վճարահաշվարկային գործիքների՝ վճարային քարտերի քլիրինգը և պրոցեսինգը իրենց մեջ ի թիվս այլ ծառայությունների ներառում են սույն պարզաբանման 1-ից 10-րդ կետերով սահմանված ծառայությունները, որոնք մատուցվում են հանրային նշանակություն ունեցող համակարգի օպերատորին կամ նրա կողմից: Համակարգը հանրային նշանակություն ունեցող է ճանաչվում, եթե համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» թիվ 342-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցի 6-րդ կետին:

1. Վճարային փաստաթղթերի և վճարային քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում և ուղարկում հաշվարկի մասնակիցներին, այդ թվում՝ վերջնահաշվարկի գծով դիրքերի ձևավորում,
2. վճարային քարտերի թողարկման նպատակով էմբոսինգի և կոդավորման իրականացման, ՊԻՆ ծրարների և կլիշեների ձևավորում,
3. քարտապանների կողմից գործառնություններ իրականացնելու արդյունքում ձևավորված էլեկտրոնային վճարային փաստաթղթերի ընդունում, կատարում և փոխանցում,
4. ապրանքներ վաճառողների, ծառայություններ մատուցողների, աշխատանքներ կատարողների (այսուհետ՝ ապրանքներ վաճառողներ) և քարտապանների նույնականացում,
5. էլեկտրոնային վճարային փաստաթղթերի ամբողջականության ստուգում և հավաստագրում,
6. հաշվարկային բանկին ուղղված էլեկտրոնային վճարային փաստաթղթերի փոխանցում և ներկայացում (մարշրուտիզացիա),
7. քարտապանների կողմից կատարված գործառնությունների արդյունքում ապրանքներ վաճառողներին վճարելու կամ վճարումը մերժելու վերաբերյալ հավաստագրման հարցումների և պատասխանների ընդունում և տրամադրում, այդ թվում՝ լիմիտների վարում,
8. ապրանքներ վաճառողներին ուղղված վճարումների կատարման կամ մերժման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում սպասարկող բանկին,
9. վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու նպատակով մասնագիտացված ծրագրային ապահովման արտոնագրերի և/կամ հավաստագրերի տրամադրում,
10. վճարային քարտերը սպասարկող սարքավորումների ծրագրային ապահովման և պրոցեսինգային կենտրոնների աշխատանքն ապահովող ծրագրերի և համակարգերի ուղեկցում:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
11 մայիսի 2010 թ., N2

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. մայիսի 10-ին (ՀՀՊՏ N13 (365), 1.06.2010):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2010)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թվականի հունիսի 8-ի նիստի «2010 թվականի հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2010 թվականի հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 19

Իրական հատվածի ցուցանիշներ 22

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստող ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 25

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 30

Կենտրոնական բանկի և գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 31

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 43

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված և դեռևս չմարված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված և դեռևս չմարված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 62
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 74
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 76
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 82
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունները արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (08.06.2010)

2010 թվականի հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2010 թվականի հունիսի 8-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Ա. Չիլինգարյանը, Ա. Մկրտչյանը, Ա. Նորեկյանը, Վ. Աբրահամյանը:

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: Մակրոտնտեսական ցուցանիշների միտումները մայիսին ևս համահունչ էին ԿԲ կանխատեսումներում նախանշված ուղղություններին: Տարեսկզբից դրամավարկային պայմանների շարունակական խստացումն արտացոլվել է գնաճի ցուցանիշում. 12-ամսյա գնաճը նվազել է կանխատեսվածից արագ տեմպերով: Չնայած գնաճային միջավայրի պահպանման ռիսկերին, առաջիկա ամիսներին գնաճի տեմպերը կշարունակեն նվազել՝ պայմանավորված արտաքին հատվածից եկող ազդակներով:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2010 թվականի մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 1.0% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը, նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատությամբ, նվազել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 6.3%: Ընդ որում, պարենային ապրանքների գներն աճել են 1.8%-ով (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 0.9%-ով (նպաստումը գնաճին՝ 0.15 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով (նպաստումը գնաճին՝ -0.1 տոկոսային կետ): Մայիսին արձանագրված գնաճը հիմնականում պայմանավորվել է գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների աճով, որի նպաստումն ընդհանուր գնաճին կազմել է 0.9 տոկոսային կետ: Ծառայությունների սակագների նվազումն արդյունք է օդային տրանսպորտի ուղեվարձի նվազման: Մայիսին գների աճ է արձանագրվել «Հրուշակեղեն», «Մսամթերք», «Կոշկեղեն», «Հագուստ և գործվածք» ապրանքախմբերում՝ գնաճին շուրջ 0.2 տոկոսային կետ ընդհանուր նպաստմամբ: Գնաճը որոշ չափով զսպվել է ձվի և շաքարավազի գների անկման արդյունքում:

ՀՆԱ իրական աճը հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.2%: Նման բարձր ցուցանիշը ձևավորվել է ինչպես մակրոտնտեսական իրավիճակի բարելավման, այնպես էլ 2009 թվականի նույն ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ի կտրուկ նվազման բազային ազդեցության արդյունքում: Բացի գյուղատնտեսությունից՝ իրական աճ է արձանագրվել տնտեսության մյուս ճյուղերում. արդյունաբերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 9%, շինարարությունում՝ 19.1%, ծառայությունների ոլորտում՝ 6% աճ: Գյուղատնտեսությունում արձանագրվել է ավելացված արժեքի 6% անկում՝ պայմանավորված բուսաբուծության ենթաճյուղում 19% անկմամբ:

Շարունակվել է արտաքին առևտրի աճը. հունվար-ապրիլին արտահանման 64.3% աճը ձևավորվել է մետաղների միջազգային գների բարձր մակարդակի (չնայած մայի-

սին դրանց դոլարային գների որոշ չափով նվազմանը), խոշոր արտահանող ճյուղերին Կառավարության աջակցության, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում արտահանման կտրուկ նվազման բազային ազդեցություններով: Ներմուծումը հունվար-ապրիլին ավելացել է 24.4%-ով՝ հիմնականում ներդրումային ապրանքների և վառելիքի ներմուծման ծավալների ավելացման հաշվին:

Ներկայացվեցին նաև ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները: Մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է դոլարայնացման մակարդակի նվազում. դրամով ավանդներն ավելացել են 0.1%-ով, արտարժույթով ավանդները նվազել են 3.5%-ով: Չնայած դրան, ամսվա ընթացքում տրամադրված արտարժույթով վարկերի ծավալները գերազանցել են դրամով վարկավորման ծավալները:

Տարեսկզբից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման և փողի առաջարկի խիստ կարգավորման պայմաններում միջբանկային ռեպո շուկայում տոկոսադրույքներն ապրիլի վերջին հասան դրամավարկային քաղաքականության խստացման ամբողջ ժամանակաշրջանի առավելագույն մակարդակին, իսկ մայիսին որոշակիորեն ճշգրտվեցին նվազման ուղղությամբ: Ի տարբերություն միջբանկային ռեպո շուկայի՝ պետական պարտատոմսերի առաջնային շուկայում տոկոսադրույքները, տեղաբաշխման ընթացքում ծավալների կրճատման պարագայում մնալով կայուն, դրամավարկային պայմանների խստացմանն արձագանքել են ավելի ուշ՝ աճելով միայն ապրիլի վերջին:

Արդյունքում, մայիսին ֆինանսական շուկայում արձանագրվել է հետևյալ պատկերը. ՊՊ առաջնային և երկրորդային շուկաներում արձանագրվել են տոկոսադրույքների աճ, մասնավորապես՝ ՊՊ առաջնային շուկայում մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի տոկոսադրույքներն աճել են 3.2 տոկոսային կետով, իսկ 3-5 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերինը՝ 0.91 տոկոսային կետով: Ռեպո շուկայում նկատվել է հակառակ միտումը՝ տոկոսադրույքները նվազել են 1.43 տոկոսային կետով:

Իրավիճակային հաշվետվության ներկայացումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ: Քննարկվեցին գնաճի ցուցանիշի վրա մինչև տարեվերջ տնտեսության ներքին և արտաքին հատվածներից եկող լրացուցիչ ճնշումները: Գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների՝ կանխատեսվածից բարձր հավանական աճը որոշ չափով կչեզոքացվի մասնավոր հատվածի ծախսումների նվազմամբ:

Արտաքին հատվածից եկող ազդակները գնանկումային են՝ պայմանավորված հումքային և պարենային ապրանքների միջազգային գների նվազմամբ և դրամի փոխարժեքի վարքագծով: Այդուհանդերձ, արտաքին հատվածում ակնկալվող զարգացումներն էապես նվազեցնում են նշված ապրանքների գների, ինչպես նաև ընդհանուր իրավիճակի վերաբերյալ կանխատեսումների հավաստիությունը: Մասնավորապես, 2010 թվականի մայիսին կրկին սրվեցին ֆինանսական ճգնաժամի կրկնվելու ռիսկերը՝ պայմանավորված որոշ եվրոպական երկրների պետական պարտքի կայունության խնդիրների առաջացմամբ: Այս զարգացումների պայմաններում ԱՄՆ դոլարն էականորեն արժևորվեց (ապրիլի համեմատությամբ՝ 6.6%-ով) եվրոյի նկատմամբ: Նկարագրված իրավիճակում առաջատար երկրների կենտրոնական բանկերը դեռևս պահպանում են վերաֆինանսավորման տոկոսադրույքի ցածր մակարդակը, թեև դադարեցրել են քանակական ընդլայնման քաղաքականության պայմաններում կիրառվող որոշ գործիքների օգտագործումը: Անդրադառնալով ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի արժեզրկման միտումների՝ ՀՀ տնտեսության վրա հնարավոր ազդեցություններին՝ Խորհուրդը նշեց, որ ներկա անորոշությունների գերակայության պայմաններում կշարունակի հետևել իրավիճակի զարգացումներին:

Անդրադառնալով գնաճի հետագա զարգացումներին և դրամավարկային քաղաքականության ուղղություններին՝ Խորհուրդն ամփոփեց, որ թեև պահպանվում է գնաճային միջավայրը՝ կապված 2009 թ. իրականացրած դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ընդլայնողական ազդեցությունների փոխանցման հետ, այնուամենայնիվ, առաջիկա ամիսներին գնաճի տեմպերը նվազելու են՝ պայմանավոր-

ված հումքային և պարենային ապրանքների միջազգային գների նվազմամբ և դրամի փոխարժեքի ներկա վարքագծով: Այս իրավիճակում Խորհուրդը քննարկեց վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողնելու և այն 0.25 տոկոսային կետով բարձրացնելու տարբերակները: Առկա են անորոշություններ տնտեսության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միջավայրում: Եվրոմիության որոշ անդամ երկրների պարտքային հիմնախնդիրների հետևանքների վերաբերյալ տարաբնույթ սպասումներն էապես ավելացրել են հումքային և պարենային ապրանքների միջազգային գների հետագա վարքագծի անորոշությունները: Մյուս կողմից՝ դեռևս անորոշ է գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների վարքագիծը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Խորհուրդը նպատակահարմար գտավ ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների փոփոխություններից և անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.25%:

Խորհուրդն անդրադարձավ մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքներին և որոշեց նվազեցնել լոմբարդային ռեպո տոկոսադրույքը 2 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10.25%՝ նպատակ ունենալով վերադառնալ քաղաքականության հիմնական գործիքի տոկոսադրույքից մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքների հավասարաչափ՝ +/-3 տոկոսային կետով հեռացված լինելու սկզբունքին: ԿԲ կողմից առևտրային բանկերի միջոցների ներգրավման տոկոսադրույքը մնաց անփոփոխ՝ 4.25%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*Հունվար - ապրիլ*	*2010թ. հունվար – ապրիլի իրական աճի հնդեքսը 2009թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*	*Հունվար – մայիս*	*2010թ. հունվար – մայիսի իրական աճի հնդեքսը 2009թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	777558.4	107.2	1016842.9	108.8
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	110.2	-	109.9
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	710.8 [2]	106.4	924.8	108.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	242590.3	112.9	305061.3	112.1
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	2143.1	114.1	2657.6	114.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	63908.0	99.0	96237.5	100.9
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	289303.4	102.3	367044.8	101.3
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	66534.1	108.8	108842.1	112.5
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	231336.0	106.4	292456.3	106.8
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	103299 [2]	98.8[1]	103549 [2]	99.0[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1157.7	-	1184.1	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	84.3	-	84.6	-
Գործազրկության մակարդակը *(%)*	7.3	-	7.1	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2010 թ.	*Սպառողական գների հնդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հնդեքս*	*Գների հնդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	101.7	103.8	99.2	103.1
Փետրվար	100.3	99.3	102.8	107.8
Մարտ	100.8	102.8	95.2	100.9
Ապրիլ	101.3	105.1	101.5	100.2
Մայիս	101.0	99.4	101.7	98.4
2010 թ. հունվար – մայիսը 2009 թ. հունվար – մայիսի համեմատությամբ	107.6	134.9	101.5	116.5

ԳՆԱՃ

ժամանակաշրջան	*2008*	*2009*	*2010*	*2010*	*2010*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.4	1.2	1.7	1.7	7.0
Փետրվար	1.1	-1.8	0.3	2.0	9.4
Մարտ	1.4	1.4	0.8	2.9	8.8
Ապրիլ	1.1	3.2	1.3	4.2	6.8
Մայիս	1.3	1.6	1.0	5.3	6.3
Հունիս	-0.5	-0.3			
Հուլիս	-2.2	-2.7			
Օգոստոս	-0.7	-0.4			
Սեպտեմբեր	0.5	0.7			
Հոկտեմբեր	0.7	0.5			
Նոյեմբեր	0.1	1.2			
Դեկտեմբեր	0.1	2.0			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.2	6.5			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	9.0	3.4			

ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [1]

Անվանում	*2010 թ. մայիսը ապրիլի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [1]*
ՍԳԻ	**101.0**	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.8**	**0.98**
բանջարեղեն և կարտոֆիլ	110.4	0.49
միրգ	116.7	0.43
ծխախոտ	100.7	0.03
հրուշակեղեն	101.6	0.03
հացամթերք	100.2	0.03
մսամթերք	100.3	0.03
ձու	95.6	-0.08
ձկնամթերք	90.1	-0.05
Ոչ պարենային ապրանքներ	**100.9**	**0.15**
կոշկեղեն	104.2	0.08
հագուստ և գործվածք	101.2	0.03
անձնական օգտագործման մեքենաներ և վառելիք	100.6	0.02
մշակույթի ապրանքներ	98.5	-0.02
Ծառայություններ	**99.8**	**-0.07**
տրանսպորտի	97.9	-0.09
բուժսպասարկման	100.1	0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2007	2008	2009	2010
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.19	0.40	-0.29	0.48
Փետրվար	-0.07	0.83	-0.53	0.74
Մարտ	-0.06	0.66	1.14	0.82
Ապրիլ	0.31	1.26	1.46	0.70
Մայիս	0.28	0.55	0.41	0.04
Հունիս	-0.16	0.30	0.25	
Հուլիս	-0.19	0.02	-0.22	
Օգոստոս	-0.16	0.06	0.37	
Սեպտեմբեր	0.51	0.48	0.72	
Հոկտեմբեր	0.80	0.10	0.48	
Նոյեմբեր	0.85	0.25	0.62	
Դեկտեմբեր	0.30	0.08	0.61	
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.97	2.91	4.63	6.20
Փետրվար	2.21	3.77	3.02	7.59
Մարտ	2.07	4.54	3.33	7.14
Ապրիլ	2.05	5.66	3.47	6.35
Մայիս	2.14	5.94	3.37	5.92
Հունիս	2.05	6.47	3.36	
Հուլիս	1.03	6.75	3.20	
Օգոստոս	1.18	6.97	3.52	
Սեպտեմբեր	1.32	6.99	3.71	
Հոկտեմբեր	1.94	6.21	4.16	
Նոյեմբեր	2.45	5.56	4.72	
Դեկտեմբեր	2.70	5.37	5.25	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
2010 թ. մայիսը 2009 թ. մայիսի նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**5.92**
տավարի միս	1.2
բենզին	1.0
շաքարավազ	0.4
ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.4
վճարովի բուհ	0.2
կարագ	0.2
վարձույթի ծառայություն	0.1
ծառայություններ միջին բժշկական անձնակազմի և լաբորանտների	0.1
ոչխարի միս	0.1
վճարովի դպրոց	0.1
հավի բուդ	0.1
ծառայություններ ախտորոշման կենտրոնների	0.1
աղացած միս	0.1
տղայի կոշիկ	0.1
ձու	-0.3

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:
[2] Տվյալները վերանայվել են ԱՎԾ կողմից:
[3] ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	*2010 թ. հունվար - ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*2010 թ. հունվար – ապրիլը 2009 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*	*2010 թ. հունվար - մայիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2010 թ. հունվար – մայիսը 2009 թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	289.8	164.3	364.1	164.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	1118.9	124.4	1411.8	128.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	829.1	114.7	1047.8	119.4

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2009 թվական					
	Հունվար – մայիս			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	276997	40677	236320	949974	190074	759899
ԱՄՆ	34633	35791	-1158	115233	113509	1724
Ուկրաինա	6939	4757	2182	22597	14702	7895
Ղազախստան	7024	510	6514	22531	2111	20419
Գերմանիա	7382	7419	-37	21366	21193	173
Իսպանիա	2930	2322	608	9292	8462	830
Ֆրանսիա	3595	5171	-1576	12783	14825	-2042
ԱՄԱ	5759	30075	-24316	15702	74197	-58495
Չինաստան	553	17332	-16779	1411	62428	-61017
Թուրքիա	1122	12653	-11531	3579	40176	-36597
Այլ երկրներ	113743	51675	62068	401210	210692	190517
Ընդամենը	460679	208383	252295	1575678	752370	823308

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2010 թվական					
	Մայիս			Հունվար – մայիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	75123	15421	59702	308003	56577	251426
ԱՄՆ	9099	7228	1871	48147	41350	6797
Ուկրաինա	1770	1716	55	7275	9602	-2326
Ղազախստան	1400	296	1103	5977	1135	4842
Գերմանիա	1467	2154	-687	8580	7501	1079
Իսպանիա	889	1164	-274	2887	3701	-814
Ֆրանսիա	1131	980	151	5381	3686	1695
ԱՄԱ	2988	2973	15	7721	21347	-13626
Չինաստան	73	6257	-6185	713	28618	-27905
Թուրքիա	72	3016	-2944	957	13204	-12247
Այլ երկրներ	18856	14707	4150	84238	57626	26612
Ընդամենը	112869	55912	56957	479880	244348	235532


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2009 թվական					
	Հունվար – մայիս			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	267582	34369	233214	904011	99524	804487
ԱՄՆ	20572	8426	12146	59288	23332	35956
Ուկրաինա	6854	3594	3260	22418	10401	12017
Ղազախստան	5428	274	5154	17517	954	16563
Գերմանիա	4228	1297	2931	11178	4276	6902
Իսպանիա	2323	662	1661	6839	1893	4946
Ֆրանսիա	2258	1216	1042	7194	2849	4345
ԱՄԱ	2440	2138	302	4769	7704	-2935
Չինաստան	236	1765	-1529	554	5789	-5235
Թուրքիա	609	1903	-1294	1953	6005	-4052
Այլ երկրներ	31833	10212	21621	88398	32155	56243
Ընդամենը	344364	65856	278508	1124119	194884	929235

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2010 թվական					
	Մայիս			Հունվար – մայիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	72759	7912	64847	295506	40219	255286
ԱՄՆ	5618	1898	3720	25295	9554	15741
Ուկրաինա	1679	1329	350	7125	5970	1155
Ղազախստան	1318	93	1225	5400	340	5060
Գերմանիա	812	531	281	4476	2331	2145
Իսպանիա	782	148	634	2491	699	1793
Ֆրանսիա	685	350	334	3273	1283	1990
ԱՄԱ	285	450	-165	1247	2983	-1736
Չինաստան	32	284	-251	207	2104	-1897
Թուրքիա	63	529	-466	410	2490	-2080
Այլ երկրներ	7340	3486	3853	34447	13540	20907
Ընդամենը	91373	17010	74362	379878	81512	298366





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԱՐԺԵՔ[1,2]

2009	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	156.9	159.4	133.3	132.4	129.9	128.7	126.3	122.6	119.3	115.5	115.4	121.2
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	277.2	288.2	239.2	231.2	224.1	223.6	224.8	219.6	212.9	206.0	203.9	210.9
2010	**Հ**	**Փ[3]**	**Մ[3]**	**Ա[3]**	**Մ[3]**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	124.8	126.0	121.7	123.0	132.2							
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	214.3	217.3	209.6	209.7	223.6							

[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով:

[2] 2009 թ. օգոստոսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը (նախկինում՝ 2000 թվականը = 100):

[3] Ըստ ԿԲ նախնական գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2009	2010				
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	2003.7	1938.4	1848.6	1911.3	1887.4	1783.5
Համախառն միջազգային պահուստներ	2003.7	1938.4	1848.6	1911.3	1887.4	1783.5
Ոսկի	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	124.7	123.6	120.2	118.3	25.6	20.3
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1879.0	1814.8	1728.4	1792.9	1861.8	1763.2

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2009	2010				
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ
Համախառն արտաքին պարտավորություններ	**639.9**	**633.7**	**624.0**	**654.5**	**647.1**	**627.6**
ԱՄՀ վարկ	426.5	423.1	416.6	448.7	442.4	429.1
ՀՓԻ տեղաբաշխում	138.0	136.9	134.9	133.6	133.0	130.1
Այլ վարկեր	74.9	73.5	72.3	71.8	71.4	67.9
Այլ պարտավորություններ	0.5	0.3	0.3	0.3	0.3	0.5

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնացված կառավարման միջոցների հաշիվներ և ավանդներ	կենտրոնացված կառավարման հաշիվներ գանձապետական համակարգով	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2009									
Դեկտեմբեր[1]	0	25937	25937	177195	652	0	574	178420	**-152483**
2010									
Հունվար	0	25549	25549	198325	649	0	572	199546	**-173996**
Փետրվար	0	23795	23795	184299	667	0	584	185550	**-161755**
Մարտ	0	22779	22779	176030	692	0	568	177290	**-154511**
Ապրիլ	0	21760	21760	175228	665	0	546	176439	**-154679**
Մայիս	0	18505	18505	170808	662	0	538	172007	**-153503**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Հրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (դրամով մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատկիչ [5]	Դրամային բազմապատկիչ [6]
2009										
Դեկտեմբեր	511678	282441	104354	386795	64082	450878	364113	814990	1.59	1.24
2010										
Հունվար	458054	252619	97378	349997	62707	412704	367122	779825	1.70	1.31
Փետրվար	446783	254158	103782	357940	60325	418265	380792	799057	1.79	1.33
Մարտ	464990	247353	92921	340274	60628	400901	411373	812274	1.75	1.30
Ապրիլ	471972	252525	94302	346827	62266	409092	387183	796275	1.69	1.27
Մայիս	444244	255044	99670	354714	61501	416215	363890	780105	1.76	1.29

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
540000
480000
420000
360000
300000
240000
180000
120000
60000
0
07
08
09
10
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
900000
800000
700000
600000
500000
400000
300000
200000
100000
0
07
08
09
10
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
04
05
06
07
08
09
10


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
04
05
06
07
08
09
10


ՄԵՋՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2009					
Հունվար	403261	279810	374226	474896	661678
Փետրվար	406869	240889	323810	388530	675911
Մարտ	407617	229279	317381	378190	659885
Ապրիլ	403494	232763	313154	382608	667266
Մայիս	421632	240335	327640	389929	686030
Հունիս	423004	243543	336745	395773	687843
Հուլիս	435022	249135	325469	415138	727340
Օգոստոս	435016	252039	337479	416016	742734
Սեպտեմբեր	449570	250250	348546	415398	754073
Հոկտեմբեր	452201	253661	355691	417574	774290
Նոյեմբեր	454839	254966	354346	416117	753118
Դեկտեմբեր	456478	256846	358071	419320	771048
2010					
Հունվար	462011	257280	360176	426814	787844
Փետրվար	461376	261667	366972	432256	825111
Մարտ	473524	288604	389786	459187	847338
Ապրիլ	494590	271881	373242	440300	839265
Մայիս	472480	270011	379601	443854	829544

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2009	2010				
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)						
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***523443***	***504130***	***477634***	***492491***	***488217***	***464155***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-11765***	***-46076***	***-30850***	***-27500***	***-16245***	***-19911***
Կառավարություն	-152483	-173996	-161755	-154511	-154679	-153503
Բանկեր	66184	55338	50253	59466	61606	59195
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	30854	8027	11255	15951	15113	12059
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	-3757	-3772	-3786	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	74534	72583	80652	67545	76827	74397
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***511678***	***458054***	***446783***	***464990***	***471972***	***444244***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	320670	283193	283304	276380	280031	284727
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	40450	29823	27460	27442	38059	34478
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	148673	143458	131985	157353	149651	121272
Այլ հաշիվներ	1885	1580	4033	3815	4231	3767
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	1846	1564	4033	3735	4160	3681
Այլ հաշիվներ (արտարժույթով)	40	16	0	80	71	87
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-19313***	***-26497***	***14857***	***-4274***	***-24062***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-34311***	***15225***	***3350***	***11255***	***-3666***
Կառավարություն	-	-21513	12241	7244	-167	1176
Բանկեր	-	-10847	-5085	9213	2140	-2411
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-22827	3228	4696	-838	-3054
ավանդներ (-)	-	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	-1951	8069	-13107	9282	-2430
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-53624***	***-11271***	***18207***	***6982***	***-27727***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-37477	112	-6924	3650	4697
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-10627	-2363	-19	10617	-3581
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-5215	-11473	25368	-7702	-28380
Այլ հաշիվներ	-	-305	2453	-218	415	-463
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-281	2469	-298	425	-479
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-24	-16	80	-9	16
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-3.7***	***-5.3***	***3.1***	***-0.9***	***-4.9***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-291.6***	***33.0***	***10.9***	***40.9***	***-22.6***
Կառավարություն	-	-14.1	7.0	4.5	-0.1	0.8
Բանկեր	-	-16.4	-9.2	18.3	3.6	-3.9
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0.0	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	-2.6	11.1	-16.3	13.7	-3.2
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-10.5***	***-2.5***	***4.1***	***1.5***	***-5.9***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-11.7	0.0	-2.4	1.3	1.7
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-26.3	-7.9	-0.1	38.7	-9.4
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-3.5	-8.0	19.2	-4.9	-19.0
Այլ հաշիվներ	-	-16.2	155.2	-5.4	10.9	-11.0

